

Պրայեստարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

**ԵՆԵՐԳԵՏԻԿ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԸՆԴԱՅԻՆ ՀՐԱԿԱՆԳՆԵՐ**

ԵԲ — 31 — 42

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ՈԴԱՅԻՆ ԳԵՐԵՐԻ ՎՐԱ
ԱՇԽԱՏՈՂ ՅԵՎ ԾԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ
ՄՊԱՄԱՐԿՈՂ ԱՆՁԱՆԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ**

ԹԱՐԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՋԻՄԵՐԵՆԻՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆԵՐԳՈՅԻ

ԵԵՐԵՎԱՆ

1939 թ.

1/2 80

05 FEB 2018

Պրակտիկա բայց յերկրութիւն, միացեց

ԽՍՀՄ ՇԱԺԿ ԳԼԱՎԵՆԵՐԳՈ

ԵՆԵՐԳԵՏԻԿ ԱԽՍՏԵՄՆԵՐԻ ԸԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԻՊԱՅԻՆ
ՀՐԱԿԱՆԳՆԵՐ

ԵԲ - 31 - 42

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ՈԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ
ՎՐԱ ԱՇԽԱՏՈՂ ՅԵՎ ԸԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ
ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁԱՎԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՈՒՍԵՐԵՆԻՑ

Խմբագիր՝ խնձ. Գ. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆԵՐԳՈՅԻ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ներկա կանոնները պարտադիր են Գլավեներգոյի սիստեմի բոլոր և ներգոյնաստումների համար։ Տեղական շահագործման որդանները պարտավոր են բարձր լարման կառուցումները սպառարկող շահագործման անձնակազմին, ըստ նրա աշխատանքի վայրի, ծանոթացնել կանոնների հետ և սիստեմատիկորեն ստուգել նրանց յուրացումն ու կիրառումը կյանքում։ Կանոնների մեջ նկատված բոլոր թերությունների մասին անմիջապես հայտնել Գլավեներգոյի Տեխնիկական Բաժնին և ելեկտրոկայանների բանվորների Միության կ. կ. տեխնիկական տեսուչներին։



11-28826 գր

Հ Ա Ս Ա Ս Վ Ա Ծ Ե
Ելեկտրոկայանների բանվորների
Միության կ. կ. նախագահու-
թյան կարմիր 29/10-1937 թ.,
առձանագրություն Հ 3

«ՀԱՍՏԱՑՈՒՄ ԵՄ»
Դավեներգոյի գլավուր
Ինժեներ
Ռ. Ա. ՄԳԻՐԻՆ
Ա. Ա. ՄԳԻՐԻՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ՈԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏՈՂ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁԱԿԱՋՄԻ ՀԱՄԱՐ

ՍՈՒՅՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՐԸ
ՅԵՎ ԿԻՐԱՌՈՒԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կանոնները նախանշվում են բարձր լարման ողաշին գծերի վրա աշխատանքներ կատարող ու սպասարկող անձնակազմի համար։
2. Բարձր լարման ողային գծերին են վերաբերվում այն պայմանները, վորոնց մեջ հաղորդալարի և հողի միջև լարումը գերազանցում է 250 գ.։
3. Այն գեղքերում, յերբ ողային գծերի անձնակազմի վրա շրջապատճեն ու կատարումը հոսանքափոխությունների և նորոգությունների յենթակայաններում ու հոսանքափոխման կետերում, ողային բաշխացանցերից սնվող, նշված յենթակայաններում և կետերում աշխատանքներ կատարելիս անձնակազմը պետք է ղեկավարվի «Քաղաքային և գյուղական ցանցերում աշխատանքների կատարման ու սպասարկման անվտանգության կանոններ»-ով և «Նահագործման և նորոգման անվտանգության կանոններով կայանների և յենթակայանների բարձր լարման կառուցումները սպասարկող անձնակազմի համար»։

4. Բաց յենթակայաններում զննություններ, նորոգություններ ու չափություններ կատարելու աշխատանքները, վորոնց մասնակից և դարձվում բարձրավոլտ ողային գծերի անձնակազմը, պետք է կատարվեն կայանների կամ յենթակայանների անձնակազմից հատկապես նշանակված անձի հսկողության տակ, վորը պար-

տավոր և բըիգաղը հրահանգել ըստ «Շահագործման և նորոգման» անվտանգության կանոնների կայանների և յենթակայտանների բարձր լարման կառուցումները սպասարկող անձնակազմի համար» և ապահովել նրանց կիրառումը:

5. Տվյալ կանոնների առաջադրանքները պարտադիր են: Սույն կանոնների պահանջներից վոչ մի շեղում, նույնիսկ ավարիացի պայմաններում, չի թույլատրվում: Նայած տեղական պայմաններին զեկավարող անձնակազմը պետք է պարզի աշխատանքների անվտանգությունը բարձրացնող լրացուցիչ միջոցառումների հարավորությունը: Լրացուցիչ միջոցառումներն ու հրահանգները չպետք են հակասեն սույն կանոններին: Լրացուցիչ միջոցառումներն ու հրահանգները պետք են տեղերում համաձայնեցվեն ելկայանների բանվորների Միության կետեաչության հետ: Մինչև սույն կանոնների լույսընծայելը հրատարակված անվտանգության բոլոր կանոնները պետք են վերացվեն, յեթե նրանք հակասում են սույն կանոնների պահանջներին:

6. Անվտանգության սույն կանոնները չիմացող անձինք բարձր լարման գծերի վրա ինքնուրույն աշխատանքի կամ սպասարկման չեն թույլատրվում:

7. Բարձրավոր ողային գծերը սպասարկող և նրա վրա աշխատանքներ կատարող անձնակազմը պետք են ծանոթացվի ոույն «Անվտանգության կանոնների» հետ, համեմատ նրա աշխատանքի տեղի հետեւյալ յեղանակներով՝ ինստրուկտաժի, բանվորներին աշխատանքի տեղում տվյալ աշխատանքներին վերաբերվող մասի անմիջական բացատրության, ելեկտրոնազորդման ողային գծերը սպասարկող կամ նրանց վրա աշխատանքներ կատարող յուրաքանչյուր աշխատողին սույն «անվտանգության կանոնները» ստորագրությամբ հանձնելու, և սույն «անվտանգության կանոնները» պաշտոնեյական շենքերում գրքույիկի ձևով կախելու:

8. Յանցային շրջանների զեկավարությունը պարտավոր և յուրաքանչյուր պաշտոն տանողի կամ տվյալ աշխատանքը կատարողի համար վորոշել, թե աշխատողը սույն կանոններից վորոնք պետք են լավ իմանա, նույնպես և կադմակերպել աշխատողների ինստրուկտաժը և նրանց յուրացման ստուգումը:

9. Սույն կանոնների յուրացման ստուգումը կատարվում է բարձր լարման վրա աշխատող առանց բացառության բոլոր անձանց վերաբերմամբ, վոչ պակաս քան տարին մեկ անգամ, այն ժամանակ յերբ աշխատակիցը թույլատրվում է պաշտոնի ինք-

նուրույն պարտականություններ կատարելու, ինչպես և աշխատողին այլ բնույթի աշխատանքի յուրաքանչյուր փոխադրումին ու պաշտոնը բարձրացնելիս:

10. Անվտանգության տեխնիկայի կանոններն ու յեղանակները գիտենալու ստուգման արդյունքների ու ժամանակի մասին պետք են գրանցումներ կատարվեն սատյաններում, վորոնք պահպատման են աշխատանքի վայրում շրջանների աղմինիստրացիայի մոտ և ներկայացվում են վերահսկող անձանց կամ կազմակերպությունների պահանջով:

11. Յուրաքանչյուր աշխատավորվում է իր անմիջական պետին անհապաղ հայտնել սույն կանոնների, իր նկատած, խախտման բոլոր զեղքերի մասին, նույնպես և ողային գծերի անսարքությունների, և այն սարքավորման, վերամբարձ և քարշի մեխանիզմների ու հարմարանքների, պաշտպանման կառուցվածքների և այլն մասին, վորոնք վտանգ են ներկայացնում մարդկանց և բռն կառուցվածքի համար:

12. Սույն կանոններին հակասող կարգադրությունները չպետք են կատարվեն: Այդպիսի կարգադրություն սաացող անձը ովարտավոր և այդ մասին տեղեկացնել վերադաս զեկավարին:

3. Ա. Ա. Ա

ԵՒ—31. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՊԱՀԱՆՁՆԵՐ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՈՂԱՅԻՆ ԳԾԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁԱՆՑ

13. Սույն պահանջները տարածվում են բարձր լարման ողային գծերի վրա աշխատանքներ տանող կամ անմիջապես սպասարկող անձնակազմի վրա հետեւյալ ցուցակի համաձայն, շրջանի կամ շրջամափակադրումն գծերի սպասարկության իՏԱ*), ըստ բարձր լարման հաղորդման ողային գծերի մոնտաժաշինարարական կազմակերպությունների պատասխանատու զեկավարներն ու աշխատանքների զեկավարները, գծային ելեկտրոդոմույուրուղյինները, նրանց աշակերտները, գծային շրջողները:

14. Բարձր լարման ողային գծերը սպասարկելու և նրանց վրա աշխատանքներ տանելու իրավունք ունեն այն անձինք,

*) Ինժեներ-տեխնիկական աշխատողները:

վորոնք հատուկ հանձնաժողովից թույլավություն են ստացել և հանձնաժողովի կողմից սույն «Անվտանգության կանոններ»-ի 2 հավելվածի աղյուսակի համաձայն վորոշ կվալիֆիկացիոն խմբին են վերադրված:

Սպասարկման և աշխատանքների կատարման իրավունքը՝ սույնութեան և կվալիֆիկացիոն խումբը հաստատվում են սույն «Անվտանգության կանոնների» 3 հավելվածի համաձայն սահմանված ձեր անվանական վկայագրով:

15. Բարձր լարման հաղորդման գծերի հենարանների վրայի աշխատանքներին թույլատրվում են 18 տարեկանից վոչ փոքրը անձինք, Բարձր լարման ողային գծերը սպասարկող անձինք պետք են բավարարեն հետևյալ պահանջներին՝

ա) Պետք են առողջ լինեն հոգեկան դրությամբ, լուսությամբ ու տեսողությամբ, չունենան աշխատանքները կատարելուն խանգարող խեղություն, վերելքը բարձրանալիս գլխապլասույտ, ուղաթափություն և այլն:

Բժշկական քննությունը պարտադիր է աշխատանքի ընդունելիս, թուկ հետագայում վերաբննությունն յերկու տարին մեկ անգամից վոչ պակաս:

բ) Բարձր լարման ողային գծերը սպասարկելու համար տարեկ պաշտոնների նշանակվող անձինք, վորոնք ստացներում համաստեած աշխատանքների վրա չեն աշխատել, պետք և փորձված աշխատողին կից վորպես դուբլյոր աշխատեն վոչ պակաս քան-

1) բաշխման կառուցվածքների զննումներ չկատարող շրջողները 15 որ.

2) բաշխման կառուցվածքների զննումներ կատարող շրջողները և ավարիային-նորոգող ըրիզագների մօնայորները 1 ամիս.

3) զծային տեխնիկները 1—1,5 ամիս (շրջամասի ծավալի համեմատ):

դ) Լավ գիտենալ անվտանգության տվյալ կանոնները և նրա աշխատանքներին վերաբերվող հատուկ կանոնները:

դ) Գործնականապես պետք են սովորած լինեն լարման տարեկանական ազատելու յեղանակները, արհեստական շնչառության յեղանակները, ելեկտրական հոսանքից ու այլ գժեախտ վեպքերից տուժածներին առաջին ոգնություն հասցնելու կանոնները, նույնութեան և ելեկտրական հաստումներում հրդեհները մարելու կա-

նոնները: Այս կետում նշված կանոնների գիտենալու ստուգումը կատարվում է սույն կանոնների գիտենալով ստուգելու հետ միաժամանակ:

12. Վերոհիշյալ պայմաններին բավարարող անձինք, նկատված վորպես իրենց աշխատանքում անվտանգության պահանջները թերի ձշտությամբ կատարողներ, առաջին նախազգուշացումից հետո պետք է հանվեն բարձր լարման գծերում ու հաստումներում աշխատանքներ կատարելուց կամ սպասարկման աշխատանքից:

17. 14—15 կկ. պահանջներից թեկուղ մեկին չբավարարող անձինք և տվյալ հաստումի սպասարկման հետ անմիջական առնչություն չունեցող բոլոր անձինք կարող են թույլատրվել աշխատանքների կամ զննման միմիայն 14 և 15 կկ. պահանջներին բավարարող անձի հսկողության տակ:

18. Զննումներին և աշխատանքների կատարմանը թույլատրել հարբած վիճակում կամ թեկուղ թեթև հարբած դրության մեջ գտնվող անձանց արգելվում է:

ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԳԾԵՐԻ ՇՐՋԱՎԱՆ ՈՒ ԶՆՍՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

19. Բարձր լարման յուրաքանչյուր գծի համար պետք է նշանակված լինեն՝

ա) Նրա անվտանգության և տեխնիկական դրության համար անմիջապես պատասխանող անձ (վարպետ, տեխնիկ, ինժեներ):

բ) Սպասարկելու և զննելու պարտավորված անձնակազմ:

Այս անձանց նշանակումը արձանագրվում է կարգադրությամբ շրջանում:

Վերանցված անձանց համար պետք է ճշգրիտ վորոշիք, ինչ ժամանակամիջոցից հետո և ինչ ծավալով նրանք պարտավոր են գծի ու սարքավորման լրիվ ու հոգատար զննումը կատարել:

Զննումները կատարվում են միանձնաբար առանց նարյադի՝ պահպանելով 20—22 կկ. նշված պայմանները:

20. Բարձր լարման գծերի շրջման ու զննման ընթացքում արգելվում է հենարաններին բարձրանալ:

Երջման ընթացքում շրջողը պետք է շարունակ գիծը լարման տակ համարի:

Գիտենալով նույնիսկ վոր գիծը անջատված են, շրջողը

պետք և նրա հետ այնպես վարվի, ինչպես լարման տակ գտնը-ված գեղքում, նկատի ունենալով, վոր ամեն մի մոմենտ նո-կարող և միացվել փորձարկման կամ աշխատանքի համար:

Յեթե շրջումը կատարվում է գիշերը, շրջողը պարտավոր է գնալ տրասայի յեզրով, վորպեսզի պատահաբար չկոխի կտրված լարը:

21. Զննումների ժամանակ անհրաժեշտ է համոզվել բարորդային կառուցումների և սարքավորման լրիվ արտաքին սարքինության մեջ, պարզել և նշել բոլոր ֆլասվածքները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն անկանոնությունների վրա, վորոնք կարող են գծային կառուցումների ամբողջության խանգարում առաջացնել և նրանով մարդկանց համար վտանգ ստեղծել, որում հաղորդալարերի ջիղերի ֆլասվածքների վրա, մեկուսիչների ֆլասվածքի վրա, սաոցաշապիկ յերեալու վրա, վորք կարող է հաղորդալարերի խզման հասցնել, հենարանի փակելու վրա, նրանց բանդաժային կամ հեղույսային ամրացումների թուլանաւում վրա, վորը կարող է հասցնել հենարանի ընկնելուն և այլն:

Ուշագրություն դարձնել վորեւե աշխատանք կատարելու կամ գծերի մոտ նոր կառուցումներ բարձրացնելու, վրա, ինչպես որինակ, կապի գծերի կառուցելու, յերկաթուլու անցումների, պահեստների և այլն: Այդպիսիները հայտնարեկելիս անմիջապես տեղեկացնել աղմինիստրացիային:

Անհրաժեշտ է հետեւ հողակցումների ամբողջությանը, հա-դրդալարերի և գետնի ու հատվող գծերի միջի հեռավորություն-ների նորմաներին համապատասխանելուն, ոլլակատների և վերա-գրերի առկայությանն ու պարզությանը, ցանկալատերի սար-քինությանը և այլն:

Չեսնարկության ագմինիստրացիան պետք է մատակարա-րի շրջողներին մանրամասն հրահանգներով վորոնց մեջ պետք է նշվեն տեղական պայմանների համեմատ դիտմունքների որ-յեկտները:

22. Կտրված և գետնին ընկած կամ կախված հաղորդալար հայտնաբերելիս շրջողը պետք է միջոցներ ձեռնարկի անցնող մարդկանց հնարավոր մատեցումը հաղորդալարին կանխելու հա-մար:

Գետնին ընկած հաղորդալարին իրեն շրջողի մոտեցումը 8—10 մ. տարածությունից ավելի մոտ արգելվում է:

Յեթե գետնին ընկած հաղորդալարը հայտնարեկված է

քնակելի վայրում կամ նրան մոտ, վջողը պետք է աշխատի կտրված լարի մոտ պահակ կանգնեցնել տեղական բնակիչներից, բացատրելով նրանց մահացու վտանգը վոչ միայն հաղորդալա-բերին գիպչելուց, այլ և 8—10 մ. տարածության նրան մոտե-նալուց և առաջարկելով կտրման տեղին վոչ վորքի թույլ չտալ մոտենալ: Իսկ յեթե պահակ գնելու հնարավորություն չկա, կամ թե լարը կտրվել և անբնակելի վայրում, շրջողը պարտավոր է մոտակա 2—3 հենարաններից պլակատները հանել և ամրացնել կտրման յերկու ծայրի մոտ ձողերի վրա: Ցանկածատ դնելուց հետո շրջողը առմիջապես պետք է տեղեկացնի շրջանին կտրման վայրի մասին, իսկ հետո վերադառնա և սպասի բրիգադի գալուն:

23. Հերթավահան անձնակազմ չունեցող հոսափոխման կետե-րի գննումները և բացողյա սյունային յենթակայանների զըն-նումները կարող են կատարվել շրջողների կողմից (հետոդիտա-կով գետնից): Ընդ ամին արգելվում է բարձրանալ կոնստրուկ-ցիանների կամ հենարանների վրա, թեկուզ և լարման տակ գրա-նվող մասերից անվտանգ հեռավորությամբ: Ողային բազման-ցանցերից սնվող, մինչև 10 կվ. լարման յենթակայանների փակ բաշխման կառուցումների և հոսափոխման կետերի գննումները կարող են կատարվել միայն այն շրջողների կողմից, վորոնք բա-վարարում են «Բաղաքային և զյուղական ցանցերում աշխա-տանքներ կատարելու և սպասարկման անվտանգության կանոն-ների» պահանջներին, հրահանգված ու սոուզված են այդ կանոն-ների յուրացման տեսակետից և բավականին ծանոթություն ու-նեն տվյալ հաստումների, սարքավորման և կառուցվածքի հետ:

24. Մանրամասն զննումները, վորոնց ընթացքում անհրա-ժեշտություն է հանգիստանում հենարանի կամ հենարանի կոնստ-րուկցիայի վրա բարձրանալ և առհասարակ հոսանքատար մա-սերին վտանգավոր հեռավորությամբ մատենալ պետք է կատար-վեն հատուկ կարգադրությամբ, նարյաղով: Զննվող գիծը պետք է անջատված լինի, ընդունում պետք է պահպանվեն այլ «Բարձ-րավոլու ողային ցանցերում աշխատանքներ կատարելու կանոն-ները» (տես 40 կ. և հետեւյալ):

Զննումները չանջատված գծերի հենարանների կամ կոնստ-րուկցիաների վրայի բարձրացումով կարող են կատարվել մի-միայն վորպես բացառություն և միմիայն ինժեներ-տեխնիկա-կան աշխատողների կողմից՝ շրջանի պետք թույլավորությամբ:

նարյագով, պահպանելով պահանջներն ու հեռավորությունները՝
ուղյուն կանոնների համաձայն:

ՈՊԵՐԱՏԻՎ ՀՈՍԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

25. Բարձր լարման ողային գծերը սպասարկող անձնակազմն թույլատրվում են սպերատիվ հոսափոխումներ կատարել սույն դաշտունների հիման վրա միմիայն հետևյալ պայմաններին բարձրաբող, հօսափոխման բացողյա պունկտերում՝

ա) հօսափոխման պունկտը ունի պարզագույն սխեմա, ընդ վերաւմ պունկտին մոտենում են ողային գծեր վոչ ավել յերեք ուղղությունից, անջատող ապարատները (յուղային անջատիչներ, բաժանիչներ), նախորդված այս կամ այն ուղղությունը անջատելու համար, միանդամայն ակնհայտ միացված են նրա շղթային:

բ) հօսափոխման կետում գրված անջատիչները ունեն մեխանիկական հաղորդակի: Իսկ յեթե հօսափոխման կետում գրված են նաև յուղային անջատիչներ, նրանք պետք են ունենան գիսատանցիոն կառավարում կամ թե նրանց ձեռքի հաղորդակը պետք է պաշտպանված լինի յերկաթշրետունյա պատիկով կամ հողակըցված յերկաթե վահանով:

26. Ողային բաց սյունյա յենթակայաններում հօսափոխումները կատարվում են համաձայն նշված յենթակայանների՝ սպասարկման հատուկ կանոնների (տես «Բարձր լարման քաղաքացին և գյուղական ցանցերի սպասարկման անվտանգության կանոններ»):

27. Բոլոր այլ ելեկտրական կառուցումներում հօսափոխումների կատարումը կարող է հանձնարարվել ողային գծերը սպասարկող անձնակազմին միայն այն գեղքում, յեթե նա գիտե «Ենագործման և նորոգման անվտանգության կանոնները կայանների և յենթակայանների բարձր լարման կառուցվածքները սպասարկող անձնակազմի համար», կամ թե «Քաղաքացին և գյուղական ցանցերում աշխատանքներ կատարելու և սպասարկման անվտանգության կանոններ», նայած նրան, թե վոր կատեգորիային պիտի վերադրվի գիտող կառուցվածքը, և վորը հաստատում է յուրացման ստուգման գրանցումով նրա մոտ յեղած անվտանգական վկայագրի մեջ համաձայն 14 կ.:

28. 25 կ. պահանջներին բավարարող հօսափոխման կետերում

հոսափոխումները կարող են կատարվել չ հավելվածի աղյուսակի 3 խմբից վոչ ցածր կվալիֆիկացիա ունեցող մի անձի կողմից:

29. Հօսափոխումները կատարվում են զեկավարող ոպերատորի հերթապահի կարգադրությամբ կամ թույլատվությամբ, այսինքն սիստեմի դիսպեչերի, շրջանի հերթապահի կամ ցանցի աշխատավայրի մասի հերթապահի: Հօսափոխումները կատարվում են առանց նարյագի հերթապահի մեջ և մտնում հոսափոխումների կետի սպասարկումը: Այստեղ վորտեղ մշտական հերթապահությունը բացակայում է, — այն անձնակազմի կողմից, վորի անունով գրվում է նարյագը, կամ այն անձնակազմի կողմից, վորի պարտավորաթյունների մեջ և մտնում այսպիսի հօսափոխումների կատարումը, շրջանի հերթապահի կամ ցանցի մասի հերթապահի մատյանում գրանցված նեռախոսային կարգադրությամբ: Վերջին զեղումը այսպիսի հեռախոսային կարգադրություն կատարողը պետք է ունենա մատյան, վորի մեջ գրանցվեն ստացված կարգադրությունները և կատարված հօսափոխումները:

30. Անհետաձգելի գեղքերում, հատկապես՝ մարդկանց հետագախտություն պատահելու գեղքում, անակնկալ տարերային արհավիքների և հրդեհների գեղքերում, թույլատրվում է յուղային անջատիչներով անջատումներ կատարել տունց զեկավարությունների անձնակազմի թույլատվության:

Նշված զեղքերում բաժանիչներով ինքնուրույն անջատումներ կարող են կատարվել միայն ժամանակ, յերբ անջատով հաստատ համոզված են, վոր անջատվող շղթան 35 և 36 կկ. նշված պայմաններին բավարարում են:

Միացումների ինքնուրույն կատարումը չի թույլատրվում:

31. Կարգադրություններ հօսափոխման մասին կարող են տրվել բանագոր, հեռախոսով կամ նարյագով համաձայն 29 կ.:

Յեթե կարգադրությունը տրվում է բանագոր և անմիջապես, կարգադրություն տվողն ու բնդունողը պարտավոր են իրարկանացել գեղքով:

Յեթե կարգադրությունը տրվում է հեռախոսով, այդպիսին ընդունողը պարտավոր է կարգադրություն տվող անձի ազգանունը ստուգել և կարգադրություն տվող անձի ազգանունը կարգադրություններ տալու իրավունք ունեցող ոպերատիվ հերթապահների ցուցակով: Ոպերատիվ հերթապահը պարտավոր է իր կողմից ստուգել կարգադրություն ըն-

բունող անձի ազգանունը հոսափոխումներ կատարելու իրավունք
ունեցող անձանց ցուցակով:

Հեռախոսային կապի խախտման դեպքում կարգադրությունները հազորդվում են գրավոր կարգադրությունների ձևով՝
սպերատիվ հերթապահի ստորագրությամբ:

32. Բանափոր, հեռախոսային և գրավոր կարգադրությունները հոսափոխման մասին կարող են արգել միայն նրանից հետո, յեթև պահանջվող հոսափոխումը կատարելու համար սիեման և աշխատանքի ռեժիմը նախապարաստված են:

Պայմանական ժամանակ նշանակելով հոսափոխման կարգադրություններ տալը արգելվում է:

Նարյագը կարող է թույլավություն ծառայել իսկական սպերացիան կատարելու միայն այն դեպքում, յեթև նրա մեջ նշյալ է, վոր պահանջվող հոսափոխումը կարելի յե անցկացնել տեղը ժամանելուն պես անմիջապես: Հակառակ դեպքում նարյադ ստացած անձը, տեղը ժամանելուն պես, պետք է հեռախոսով թույլավություն խնդրի հոսափոխում կատարելու:

33. Կարգադրությունները պետք են ձեռակերպվեն ձիւտ և սրբազ: Կարգադրություն տվողը անմիջապես պետք են գրանցի ժամայանի մեջ նրա բովանդակությունն ու հազորդման ժամանակը:

Բանափոր կամ հեռախոսով կարգադրություն ստացողը պարտավոր են այն կրկնել: Յեթև ընդունողին կարգադրությունը անհասկանալի յե թվում, նա պարտավոր են կարգադրություն ստողից պահանջել անհրաժեշտ պարզաբանություններ:

Կարգադրություն ընդունողը իր մոտ յեղած մատյանում դրանցում են կարգադրություն ստանալու ժամանակը և նրա բովանդակությունը, իսկ հոսափոխում կատարելուց հետո տեղեկացնում են կարգադրողին անձամբ, հեռախոսով կամ գրությամբ սպերացիան վերջացնելու մասին և նշում և մատյանում կամ նարյադում նրա կատարման ժամանակը:

34. Հերթապահն (44 կ.) սպերացիան ավարտված չպիտի ժամարի, մինչև չստանա այդ մասին տեղեկություն կարգադրություն ստացած անձից:

Հիմնվել ազգանշանային կառուցվածքների յուցունքի պիտի, սպերացիային ներկա գտնվող անձանց տեղեկությունների վրա, կամ առաջուց պայմանավորված ժամանակի լրանալու վրա սպեքլում է:

35. Հոսափոխման կետերում դրված բաժանիչներով հոսա-

փոխումներ կատարելու կարգադրությունները կարող են տրվել հետեւյալ գեղքերում՝

ա) Յեթև զլթաները, վորոնցում կատարվում են հոսափոխումները, չեն գտնվում լարման տակ.

բ) Յեթև հոսափոխում ողային գիծը կամ ողային ցանցի մասը (առանց միացված տրանսֆորմատորների) թեկուզ և զըտնը վում են լարման տակ, բայց չեն կրում վոչ մի բեռնվածք, որում վորում նրանց ընդառուք յերկարությունը չի գերազանցում 10 կմ անկախ լարումից: 110 կվ և բարձր լարումով պարագ գծերի անջատումն ու միացումը բաժանիչներով թույլատրվում են միմիայն չոր պարզ յեղանակին:

36. Բացի գրանից, հոսափոխման կետերում սյունային բացույա բաժանիչներով, մեխանիկական փոխանցում ունեցող մինչև 10 կվ ներառյալ լարում ունեցող ցանցերում թույլատրվում են լարման տակ կատարել հետեւյալ սպերացիաները՝

ա) Միացնել և անջատել ողային ցանցերի ծայրամասերը, վորոնց մեջ ընդհանուր հնարավոր բեռնվածքի հոսանքը չի գնապանցում 15 ա.

բ) Յերկկողմանի սնում ունեցող զլթաները անջատել, յեթև այդ գեղքում ապասվող հավասարիչ հոսանքը չի կարող գերազանցել 50 ա և յեթև տվյալ զլթան սնող կետերը բացի նրանից ունեն այլ ելեկտրական կապ իրար հետ:

37. Զեռքի հաղորդակով մասլյանիկների և անջատիչների գետանից միացումն ու անջատումն պետք են կատարվեն սեղմինեանոցներով, մեկուսացնող հիմքի վրա կանգնած կամ ունենալով վուներին ուղինե բռտեր:

Բացույա սյունային անջատիչների միացումն ու անջատումը, վորոնց ձեռքի հաղորդակը անմատչելի յե գետնից, պետք են կատարվեն սեղմինե ձեռնոցներով, փայտյա սանդուխքին կանգնած կամ անկերտով փայտյա սյունով բարձրացած և ապահովիչ գոտիյով իրեն կապելով:

Այդպիսի հոսափոխումների կատարումը թույլատրվում է պայմանով, վոր ամենացածր հոսանքատար մասից մինչև անջատողը հեռափուլությունը կլինի վոչ պակաս 3 մետրից:

38. Հոսափոխման կետերում գիծը անջատելիս նրա վրա աշխատանքներ կատարելու համար սպերացիավ հերթապահը անջատում կատարող անձին նախազգուշացնում ե այն մասին, վոր գծում աշխատանքներ կատարվեն, պահանջում ե զծի հոգակցում՝

Ք գծային բաժանիչների փոխանցումների բռնակների վրա կախել
- Չմիացնել, աշխատանք և կատարվում գծում պլակատը:

Նշան պլակատները կարող են հանվել միմիայն ոպերա-
տով հերթապահի կարգադրությամբ: Հերթապահը պարտավոր է
դաշտադրություն տալ այնքան պլակատ կախելու մասին, վոր-
քան առանձին բրիգադ աշխատում է գծում:

Գծում աշխատանքները ավարտելուց հետո նրա միացումը
կարող է կատարվել միմիայն նույն ոպերատիվ հերթապահի:
Դաշտադրությամբ, վորը անջատման կարգադրություն եր ավել,
կամ նույն աշխատանքի տեղի հետեւյալ հերթափոխումների ողե-
տառիվ հերթապահի:

Միացում կատարող անձը միացնելու կարգադրություն ստա-
նալուն պես՝ հիշեցնում է ոպերատիվ հերթապահին հաղորդակի
քանակի վրա յեղած «Չմիացնել, աշխատանք և գծում» պլակատ-
ների թիվի և առկայության մասին և, հաստատում ստանալով
հանում և հողակցումը, ապա պլակատները և կատարում գծի
միացումը:

39. Գիծը պատահական հնարավոր հակադարձ միացումից
առաջանալու համար, մինչև նրա վրայի աշխատանքների ավար-
տումը, հստափոխման կետերում դրված յուղային անջատիչների
շտուրլալները կամ բաժանիչների հաղորդակնորի բռնակները
պետք ե փակվեն շղթայի և փականքի ողնությամբ, վորի բա-
նալին պետք ե գտնվի անջատում կատարած անձի մոտ, կամ
նրա կողմից հանձնվի նրան փոխարինող հերթապահին:

ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ՈԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Ընդհանուր դրույթներ

40. Բարձր լարման գծերի վրա, բաժանման պունկտերում,
այտնի ու բացողյա յենթակայաններում աշխատանք կարող է
կատարվել հետեւյալ պայմաններում:

ա) Աշխատողների ձեռքին պետք է լինի նարյադ (աշխա-
տանքի դրավոր թույլավություն):

բ) Աշխատանքը պետք է կատարվի վոչ պակաս, քան յեր-
իշը անձով:

գ) Գծից պետք է հանվի լարումը, և աշխատանքը պետք
է կատարվի հողակցման վերդրումով գծի յերկու ծայրերին կա-

յաններում կամ յենթակայաններում և աշխատանքի տեղում
յերկու կողմից:

դ) Ամպրոպի ժամանակ բոլոր աշխատանքները պետք ե
դաշտարեցվեն, բանվորները հանվեն և հեռացվեն տրաստյի սահ-
մանից:

Եյս ընդհանուր կանոններից թույլատրվում են հետեւյալ
բացառությունները՝ ըստ «ա» կ. թույլատրվում և առանց նար-
յադի կատարել մանր (133 կ. վերահաշված) աշխատանքներ հե-
տարանների հիմքերի վրա, յերբ աշխատանքը կատարվում է
շղթղի կամ այլ գծային աշխատողի կողմից նրա սպասարկած
գծամասի վրա:

Հոտ «բ» կ. մեկ անձին թույլատրվում է կատարել 133 և
213 կկ նշան պլակատանքները, վորոնց ընթացքում աշխատողը
չպետք է հենարաններին բարձրանա, չպետք և վերգցում կամ
հողակցման վերդրում կատարի և վորոնց ընթացքում բացառ-
վում ե գործիքներով ու հարմարանքներով լարերին զիազելու-
կամ նրանց մոտենալու ամենայն հնարավորություն:

Հոտ «գ» կ. թույլատրվում ե 2 մասում նշված վորոշ աշ-
խատանքների կատարումը լարման տակ գտնվող գծերի վրա,
յեթե այդ գծերի անջատումը անհնար և առանց սպասողին
հներգիս տալու ընդմիջման կամ թե այդ աշխատանքները ըստ
իրենց բնույթի լարման առկայություն են պահանջում:

Աշխատանիների անվտանգության համար պատասխանա-
տու անձինք

41. Աշխատանքների անվտանգության համար պատասխա-
նատու յեն հանդիսանում հետեւյալ անձինք՝ աշխատանքները
կազմակերպող և նարյադ տվող աշխատանքների զեկավարը. գի-
ծը անջատելու և միացնելու կարգադրություն տվող ու աշխա-
տանքի անցնելը թույլատվող ոպերատիվ հերթապահը և աշխա-
տանքները տեղում զեկավարող ու աշխատանքներ կատարողը:

42. Նարյադ տվող զեկավարը պատասխանատու յե աշխա-
տանքի կատարման անհրաժեշտության ու հնարավորության, աշ-
խատանքների անվտանգության նարյադում նշված միջոցառում-
ների ճշուության և աշխատանքների կատարման համար նշա-
նակված անձանց գորակի բավարար լինելու համար: Աշխատան-
քի զեկավար կարող են լինել աշխատանքներ պետը և ողա-

յին գծերի դրության տեխնիկական վերահսկողություն տանոք շրջանի (շրջամասի) ինժեներ-տեխնիկական աշխատողները:

43. Աշխատանքների կատարողը պատասխանատու յե աշխատանքների ճիշտ և անվտանգ կազմակերպման, նշանակված ահմանց համապատասխան հրահանգման համար:

Աշխատանքների կատարողը պարտավոր և մինչև աշխատանքների սկիզբը անվտանգության բոլոր անհրաժեշտ միջոցացաւմները կիրառել մարդկանց դասավորել աշխատանքի տեղում՝ սուսեգել պահպանի հարմարանքների և գործիքների սարքինությունը բրիգադը հրահանգել և նրա վրա ունենալ անընդհանուրողություն:

Աշխատանքների կատարող կարող են նշանակվել 4 խմբից վոչ ցածր վորակավորում ունեցող անձինք: Այս կանոնից շեղումները թույլատրվում են միմիայն «Առանձին աշխատանքների կատարելու անվտանգության հատուկ կանոններում» (աես 2 մաս) գերահաշված մի քանի ամենափոքր վտանգ ներկայացնող աշխատանքների համար:

44. Ոպերատորի հերթապահը պարտավոր և կատարել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր անջատումները, հողակցել գծի ծայրերը կայաններում կամ յենթակայաններում, և թույլատրվություն տալ աշխատանքները սկսելու. նապատախանատվություն և կրում վերանցված ոպերացիաների հշուաթյան համար:

Անջատումները դեկավարել և աշխատանքները սկսելու թույլատրվություն տալ իրավունք ունեն՝ ծայրագծերի համարավյալ գիծը սնող կայանի կամ յենթակայանի ոպերատիվ հերթապահը, իսկ յերկու կամ ավել կողմերից լարում ստացող գծերի համար շրջանի ոպերատիվ հերթապահը (շրջանի գիսպետչերը) կամ սիստեմի ոպերատիվ հերթապահը (սիստեմի գիսպետչերը): Այս կամ այն գծերի վրա աշխատանքներ կատարելու համար նրանց անջատման իրավունք տալը տարբեր կատեղորիաների պատասխանատու հերթապահներին վորոշվում և կարգադրությամբ ըստ սիստեմի: Նարյադում պետք ե նշվի, թե վոր ոպերատիվ հերթապահն և պատասխանատու հանդիսանում ըստ տվյալ աշխատանքի:

Այս գրույթներում, վորակել բացակայում և մշտական ոպերատիվ հերթապահությունը, ոպերատիվ հերթապահի պարտականությունը կատարում և աշխատանքների դեկավարի կողմից:

հատուկ նշանակված անձը տվյալ աշխատանքի հետ կապված անջատումներ ու միացումներ կատարելու համար: Այդ անձի ազգանունը հայտնվում է աշխատանքի դեկավարին և նշվում է նարյադում: Կարգադրություններ վորեն մի այլ անձի կողմից միացում կամ անջատում կատարելու մասին չեն կարող արվել:

Նարյադ աշխատանիքի համար

45. Նարյադը հանդիսանում է գրավոր կարգադրություն աշխատանք կատարելու համար, վորակել պետք և նշվն նախադրության անհրաժեշտ միջոցառումները: Նարյադի տալը նպասկ ունի ընդգծել աշխատանքի կարեւությունն ու բարձրացրած վտանգը, նույնպես և վորոշել աշխատանքները տանելու բնթացքում անվտանգության միջոցառումներ ձեռնարկելու պարագվոր մարդկանց:

Նարյադի ձեր արված և 1 հավելվածում: Նարյադը տալիս նրա յերեսի վրա պարտադիր և նշվող աշխատանքների շրջապատին համապատասխանող բոլոր կետերի լրացումը:

Աշխատանքների յուրաքանչյուր կատարողի համար միաժամանակ արվում է մեկ նարյադից վոչ ավել: Ամեն մի բրիգադի համար պետք և լինի առանձին աշխատանքի կատարող: Ամեն մի գծի համար տրվում է առանձին նարյադ:

46. Նորոգման և նորոգման-ավարիական գծի աշխատանքների համար աշխատանքների դեկավարի կողմից նարյադը տըրավում և աշխատանքների կատարողին կամ անձամբ, կամ հեռախոսով հակադարձ ստուգումով, կամ ուղարկվում և սուրհանդակով: Աշխատանքների դեկավարը պետք և անձամբ ճանաչի աշխատանքներ կատարող:

Նարյադը աշխատանքի համար կարող և տրվել նույնպես ոպերատիվ հերթապահի կողմից գծային աշխատողին, ինչպես անձամբ, նույնպես և հեռախոսով ու հակադարձ ստուգումով: այն անձնավորությունը տվյալ գեպքում համարվում և աշխատանքներ կատարող և պետք և բավարարի 43 կ. պահանջներին:

47. Նարյադը անձամբ տալու գեպքում կամ սուրհանդակակի միջոցով ուղարկելիս գրվում և յերկու որինակով, վորոնցից մեկը մնում և աշխատանքների դեկավարի կամ նարյադ տվող ոպերատիվ հերթապահի մաս, իսկ գույնը տրվում և աշխատանքներ կատարողին: Յեթե գեղը, վորը վրա աշխատանքի և նախատեսվում է նարյադը լրացնելը մունիստին արգեն ան-

Հատված և ու հողակցված, աշխատանքների գեկավարը լրացներվ նարյադի յերեսի և հակադարձ կողմի համապատասխան տողամբները, ստորագրելով այնտեղ, թույլտվություն և տալիս անմիջապես սկսել աշխատանքները:

Յեթե նորոգման ըրիգադան աշխատանքի տեղն և ուղարկվում մինչև գծերի անջատումը, նարյադի հակադարձ կողմը չի լրացվում, իսկ յերեսին նշվում է ինչ յեղանակով աշխատանքները սկսելու թույլտվություն կարվի (գրությամբ, սուրհանդադարվ, հեռախոսով, ինքնաթիռով):

Այս գեղքում աշխատանքներ կատարողը ինքն և լրացնում սարյադի հակադարձ կողմը աշխատանքի տեղում:

48. Նարյադը հեռախոսով հանձնելիս (որ, գծային պունկտերի մոնայրներին), զեկավարը լրացնում և նարյադի մեկ բլանկը և թելադրում և հեռախոսով նարյադի լրիկ բովանդակությունը (հեռախոսագրի ձեռվ) աշխատանքներ կատարողին, վորը լրացնում և առաջուց իրեն հանձնված բլանկներից մեկը հակադարձ ստուգումով: Աշխատանքներ սկսելու թույլտվությունը կարելի և տալ նարյադը հանձնելու հետ միասին կամ ավելի ուշ գրությամբ, սուրհանդադարվ, հեռախոսով, ինքնաթիռով:

49. Աշխատանքներ սկսելու թույլտվություն տալ՝ նշելով գծի անջատման ժամը, արդեկվում են: Աշխատանքի անցնելու թույլտվությունը կարագ և տրվել միմիայն նրանից հետո, յերբ գիծը անջատված և ու հողակցված կայաններում կամ յենթակայաններում բարը կողմերից, վորտեղից նա կարող և լարում ստանալ:

50. Յեթե նարյադը կարգավիս աշխատանքներ կատարողի մեջ ամենափոքր անգամ կասկած և առաջանում, նա պարտավոր և անհապաղ պարզել այն զեկավարի հետ կամ նարյադ տվող անձի հետ, պահանջելով, անհրաժեշտության դեպքում, գրավոր ձագուում:

51. Նարյադի մեկ որինակը միշտ պետք և գտնվի աշխատանքի տեղում: Աշխատանքը սկսել առանց նարյադի և նրա մեջ առանց նշումի աշխատանքները սկսելու թույլտվության մասին արդելվում և 133 կ. նշված աշխատանքների բացառությամբ: Աշխատանքը վերջացնելուց հետո նարյադը հանձնվում է նրա տվողին և պետք և վերջինի կողմից պահպի աշխատանքը վերջացնելու ժամանակից հետո 3 ամսվա ընթացքում:

ԳՄԻ ԱՆՁԱՏՈՒՄՆ ՈՒ ՀՈՂԱԿՑՈՒՄԸ

52. Գծի վրա աշխատանքներ կատարելը թույլ տալուց առաջ, 44 կ. համաձայն աշխատանքների սկսման թույլտվություն սալու իրավունք ունեցող ոպերատիվ հերթապահը պետք և կատարի հետևյալ ոպերացիաները՝

Տալ կարգադրություն այն կայանների կամ յենթակայանների, վորոնցից տվյալ գիծը կարող և ստանալ լարում, բոլոր հերթապահներին անջատել գիծը յուղային անջատիչներով, գծամին ու շինային բաժանիչներով:

Ստանալով կայանների կամ յենթակայանների հերթապահներից հաստատում, վոր գիծը բոլոր կողմերից անջատված են, ոպերատիվ հերթապահներ կարգադրություն և տալիս զնել բոլոր ծայրակետերում յեռափազ հողակցումներ ու կախել «Զմիացնել գծում աշխատում են» ողակատները:

Պակատները պետք և կախվին գծային բաժանիչների հաղորդակներից: Յեթե բաժանիչները միափազ են, պլակատները կախվում են նրանց բջիջների ցանկապատերից: Պակատների թիվը պետք և հավասար լինի գծում աշխատող բրիգադների թվին:

Միմիայն կայանների ու յենթակայանների հերթապահներից հաստատում ստանալուց հետո այն մասին, վոր հողակցումները գրված են ու պլակատները կախված, ոպերատիվ հերթապահը կարող և թույլտրել գծում աշխատանքներ սկսել:

Ոպերատիվ հերթապահներ իր կողմից տրված կարգադրությունները գրանցում են իր ոպերատիվ մատյանում, նշելով ժամանակը, նույնպես և կայանների ու յենթակայանների հերթապահների հաստատումները այդ կարգադրությունները կատարելու ժամանակը:

Կայանների ու յենթակայանների հերթապահները իրենց հերթին գրանցում են ոպերատիվ մատյաններում վերագաս ոպերատիվ հերթապահի կարգադրությունները ստանալու ժամանակը և այդ կարգադրությունները կատարելու ժամանակը:

ԱԾԽԱՏԱԲՆԵՐ ԱԿՍԵԼՈՒ ԲՈՎԱԴՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՐ

53. Նրանից հետո, յերբ գիծը բաղմակողմանի անջատված և ու հողակցված, նարյադ տվող աշխատանքների զեկավարը, կամ անջատումը դեկավարող ոպերատիվ հերթապահը տալիս և

կարգադրություն աշխատանքներ կատարողին՝ աշխատանքները
սկսել:

Թույլավությունը կարող է տրվել անձամբ, հեռախոսով
կամ սուրհանդակով ուղարկվող գրությամբ:

Յեթե անջատումներ ղեկավարող ոպերատիվ հերթապահը
չի կարող ուղիղ հեռախոսային կապ հաստատել աշխատանքներ
կատարողի հետ, բայց ունի կազ յենթակայանի հետ, վորը իր
հերթին կարող է ունենալ հեռախոսային կազ աշխատանքներ
կատարողի հետ, թույլավությունը կարող է հանձնվել ոպերա-
տիվ հերթապահից աշխատանքների կատարողին փոխընդունու-
մով միջակա յենթակայանի հերթապահի միջոցով: Այդ գեպքում
միջակա յենթակայանի հերթապահը պարտավոր է ոպերատիվ մատ-
յանում գրանցել ոպերատիվ հերթապահի կողմից նրան հանձ-
նվող թույլավությունը ու ապա կրկնել այն, կարդարով գըր-
վածը: Յեթե ոպերատիվ հերթապահը հաստատի, վոր գրանցու-
մը կատարված է ճիշտ, յենթակայանի հերթապահը կարող է
հանձնել թույլավությունը հեռախոսով աշխատանքներ կատա-
րողին, կարգադրով մատյանից ու պահանջելով կարգադրության
կրկնությունը:

Անձամբ հանձնելիս գրանցում է կատարվում նարյադում:
Հեռախոսով կամ սուրհանդակի միջոցով գրավոր հանձնվող
թույլավությունը պետք է շարադրվի այսպես՝

«Այսինչ գիծը բոլոր կողմերից անջատված է և այսինչ
տեղերում (թվել կայտններն ու յենթակայանները) նրա
վրա դրված են հողակցումներ, թույլատրվում ե աշխատանքները
սկսել, նախապես դնելով հողակցում գծի վրա աշխատանքի աեղի՝
յերկու կողմից»:

54. Հեռախոսային կազի բացակայության դեպքում կամ
աշխատանքները շտապ կատարելու անհրաժեշտության դեպքում
գծի մի քանի տեղերում կարելի յե աշխատանքներ սկսելու
թույլավություն տալ ազդանշանով ինքնաթիւից:

Ինքնաթիւը թույլում է գծի ուղղությամբ գետնից 40—50 մ.
բարձրությամբ, յուրաքանչյուր բրիգադի վրա ինքնաթիւը շըր-
ջան է կատարում և այդ ժամանակ գցում է նշում պարունակող
վիճակներ այն մասին, վոր գիծը անջատված է ու հողակցված, և
վոր կարելի յե աշխատանքը սկսել: Այդ գեպքում աշխատանքը
սկսել թույլատրվում է միմիայն այն բանից հետո, յերբ բրիգա-
դի կողմից վիմպելը կոտնվի և կկարգացվի աշխատանքը կա-

ռապեկու հնարավորության ցուցմունքը: Թույլավության բավան-
դակությունը պետք է համապատասխանի թույլավության ձերն
համաձայն 53 կ. վերջին պարբերության:

Աշխատանիների նախապատրաստումը տեղում

55. Աշխատանքները սկսելու իրավունք ստանալով, գծի աշ-
խատանքների կատարողը պետք է նշինարյադում թույլավություն
ստանալու ժամանակը, յեղանակը վորով նա ստացվել եր և թույլ-
ավություն ավող անձի ազգանունը: Հետո նա պետք է հողակցում
գծի աշխատանքի տեղում գծամասի յերկու կողմից, վորտեղ աշ-
խատանքներ են կատարվում, մոտակա անկերային հենարաննե-
րից վոչ հեռու: Հողակցումների միջև հեռավորությունը 2 կմ.
ավել չպիտի լինի, հակառակ գեպքում դրվում են լրացուցիչ
հողակցումներ:

56. Հողակցող ու կարձացնող հաղորդալարերի կոմպլեկտի
միջացով վստահելի կարձացումներ ու հողակցումներ ողային գծի
հաղորդալարերի վրա զնելուց առաջ, պետք է համոզվել վոր
գծում լարումը բացակայում է համապատասխան փորձարկող
գործիքով կամ հատուկ ձկուն հաղորդալարի վերցումով: Այդպի-
սի վերցումը կարող է արվել միայն այդ գեպքում, յերբ վտանգ
չկա վերցումով գիշել լարման տակ գտնվող այլ գծի:

57. Վերցումի համար գործածվող հաղորդալարը պետք է
պատրաստվի պղնձյա ձկուն պարանից և մի ծայրում ուժավի
պատրաստակային սկզբիչով հողակցված մետաղյա մասերին միաց-
նելու համար, իսկ մյուս ծայրում ունենա բեռ 400—500 գ. քա-
շովի պարանի վերցելը հեշտացնելու համար: Պարանի յերկա-
ռությունը պետք է համապատասխանի սպասարկվող գծերի գա-
բարիտներին: Պարանը պետք է ունենա կտրվածք 6—10 մմ²:

Ողային գծերի վրայի վերցումների համար գործածվող
պարանը պետք է լինի նրանց սպասարկող բրիգադների գոր-
ծիքներում:

58. Ողային գծերի հաղորդալարերը վերցումով հողակցելիս
հողակցող պարանը սկզբում միացվում է հողին, ու ապա սրանից
հետո միայն նրա յերկորդ ծայրը վեր և զցվում գծի վրա:

Վերցում կատարող անձը գծից հեռու պետք է կանգնած
լինի, հողակցման տեղից 4—5 մ վոչ պակաս, և պարանը վեր
զցելուց հետո չպիտի նրան դիպչի:

59. Նրանից հետո, յերբ պարանի վերցումը կհաստատի

զծում լարման բացակայությունը, նրա վրա դրվում ե հաղորդաւարերի կոմպլեկտներով վատահելի հողակցում ու կարճացում Մինչև վատահելի հողակցում ու կարճացում չդրվի, վեր դժան պարանը չպիտի հանվի:

Այս գեպքերում, յերբ հողակցման յենթակա ոդային գծերի մոտ կա լարման տակ գտնվող այլ գիծ, նույնպես բոլոր յերկշղթա գծերում, վորոնց վրա շղթաներից մեկը գտնվում ե լարման տակ, վերգցում չպիտի կատարվի:

Հողակցումը դրվում ե հողակցող ու կարճացնող հաղորդաւարերի կոմպլեկտներով, մոկուսացված շտանգների միջոցով:

Այդ ոսկերացիան կատարող անձնակաղմք պետք ե լինի ռեզինե ձեռնոցներով: 6 և 35 կվ. գծերում շտանգները պետք ե լինեն համապատասխան լարման, 110 կվ. գծերում թույլատըրվում և 35 կվ. լարման շտանգների գործադրումը, փորձարկված 90 կվ.:

60. Հողակցող ու կարճացնող հաղորդաւարերը պետք ե պատրաստվեն ճկուն պղնձյա կարելից և պետք ե ունենան կարճ միացումների ընթացքում տերմիկ կայունության տեսակետից բավականին կարվածք, բայց 25 մմ² վոչ պակաս:

Նրանց ներքեւ ծայրերը պետք ե ոժտված լինեն պատռակային սեղմիչներով հողակցված մետաղյա առարկաներին միացնելու համար, իսկ հողակցող գծի լարերի վրա դրվագ ծայրերը պետք ե ունենան հողակցող լարի հետ լավ կանաչական պահովող կլեմի կոնսորուկցիան պետք ե պարզ լինի արագ գնելու և հանելու հնարավորության համար ու դրա հետ միասին չպիտի թույլատը լարերի ճոճման ընթացքում քամույթ և այլ պատճառներից կլեմի դուրս պրծնելը: Հողակցումը դնելու և ամրացնելու բոլոր ոպերացիաները պետք ե կատարվեն աեզին ձեռնոցներով: Հողակցման ամրացումը կատարվում է հատուկ շտանգով կամ ուղինե ձեռնոց հագած ձեռքերով:

Հողակցումը գնելու սկզբում պետք ե միացվեն հողակցման հաղորդաւարերի ներքեւ ծայրերը հողին, և դրանից հետո միացն կատարվել մյուս ծայրերի վերգրումը հողակցող գծի հաղորդաւարերին: Հողակցման ընթացքում հողակցող հաղորդաւարի ամրացումը հենարանի վոտքին պետք ե կատարվի հենարանի ներքենում, անմիջապես գիտնի մակերեսի վրա: Հողակցումը հանելիւ

պետք ե վարվել հակառակ կարգով, այսինքն նախ հանել գծի հաղորդաւարերից հողակցող հաղորդաւարերի կեմեները, իսկ հետո անջատել հողից նրանց ներքեւ ծայրը¹⁾:

61. Մետաղյա կայմերում վորպես հող ե հանգիսանում հենարանի ներկից մաքրված մարմինը, հողակցող հաղորդաւարը պետք ե վատահելի հեղույսի կայմին:

Հողակցող հաղորդաւարը (որ, գեպի պարպիչները տանող) ունեցող փայտյա հենարաններում, կարճացումը միացվում է իր ներքեւ ծայրով նրան, իսկ այդպիսի հաղորդաւարի բացակայության գեպքում շինվում ե արհեստական հողակցում մետաղյա ցիցի խփումով կամ գայլիկոնը պտտուտակելով 1 մ վոչ պակաս խորությամբ:

62. Բարձր լարման մի այլ գծի անցումի վրա աշխատանքներ կատարելիս կամ նրանից այնպիսի հեռավորության վրա, յերբ աշխատանքների ընթացքում չի բացառվում հնարավորությունը դիպչելու նրա լարերին կամ նրանց վատանգավոր մոտեցման, այդ յերկրորդ գիծը պետք ե անջատված ու հողակցված լինի:

Նրա վրա բավական ե հողակցում դնել մեկ տեղում, աշխատանքներ կատարելու տևղի մոտ:

Յերկրորդ գծի անջատումն ու հողակցումը կատարվում ե ըստ նարյաղի և պահպանելով նույն կանոնները, ինչ վոր նուրոգվող գծի անջատման ու հողակցման ընթացքում:

Յեթե բարձր լարման յերկրորդ գիծը պատկանում է այլ ձեռնարկության, նրա անջատման ու նրա վրա հողակցում դնելու համար աշխատանքներ կատարողը պետք ե կանչի այդ ձեռնարկության ներկայացուցչին:

63. Այս գեպքերում, յերբ առնար և առանց սպառողներին

¹⁾) Ուղացին գծերի հաղորդաւարերի վրա հողակցում գնելու համար բարեւրդ և տրվում գործածել Մոսեներգոյի ցանցերում կիրառվող հողակցող հաղորդաւարերի կոմպլեկտացին հարմարանքը: Նա բաղկացած է ԱԲ պղնձա ձկուն մոտ 25 մ յերկարությամբ կարելի հատվածից, ունեցող յերկու ճյուղագրում նույնանման կարելից յուրաքանչյուրինը՝ 7—8 մ. Կարելի ներքեւ ծայրում կա պտուտակային սեղմիչ Ա, իսկ ճյուղագրումների գերեւ ծայրերում կլեմի պղնձյա ծայրոցներ:



Եներգիա առալու ընդհատման, հատվող կամ նորոգվող գծի մաս գտնվող այլ գծի անջատումը, աշխատանքները կարող են թույլա տըրզել առանց անջատման, բայց 110 և 111 կէ. նշված անվատանգության կանոնների ու պայմանների պահպանումով:

ՈՒԱՅԻՆ ԳԵՐՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՎՏԱՆ
ԳՈՒԹՅԱՆ ՀԽՄԱԿԱՆ ՄԻԶՈՑԱԴՈՒՄՆԵՐ

ԵՐԵՒԱՆԻՐ ՄԻԾՆԳԱՆԱՍԻՒ

Ամեն մի աշխատանքներ կատարողի հսկողության տակ գտնվող աշխատանքների գծամասը 2 կմ. չպիտի անցնի:

65. Ամեն անգամ աշխատանքներ սկսելուց առաջ աշխատանքներ կատարողը պարտավոր է անձամբ զննել ու համոզվել վեր աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ վերամբարության քարշի մեխանիզմներն ու նըանց կից սժանդակ հարմարանքները, կարապիկները, ամբարձիչները, բազմաճախարակները ճախարակները, ճոպանները, կեռերը, բեռների կամ ծանրոցների տարրեր տեսակի բռնիչները, հենարանները պահող փողկանները, հենարանները բարձրացնող սլաքները, բարձրությունում աշխատելու հարմարանքները, ճոճանակները, հարթակները, սանրությունները, ճանկերը, կարաբինով շղթայագոտիները և անվորներին տալու յենթակա բոյոր գործերներ սառեւէն, իւ-

66. Աշխատանքների ընթացքում բոլոր վերամբարձու քարտիքները սարքին են:

Հեխանիզմները և նրանց համար ստանդարտ հարմարանքները, ներառյալ բնունատար ու ցցապարանների տրոսներն ու պաշտանները պետք են

ա) բավարարեն վերամբարձ մեխանիզմների ու նրանց
կից սժանդակ հարմարանքների կառուցման կանոններին.

բ) վկայված ու փորձարկված լինեն համաձայն գոյություն ունեցող սրենքի սահմանված ժամկետներին ու սահմանված նորմաների:

67. Աշխատանքներ կատարողը պարտավոր է հսկել, վորագեսպի բարձրացվող առարկաների քաշը, նույնպես և քարշույժերի մեծությունը վոչ մի գեաքում չգերազանցեն աշխատանքների ընթացքում գործադրվող մեխանիզմների, տրամադրելու, պարանունների և այլ ոժանդակ հարմանքների համար թույլատրվող սահմանային գործող բեռնվածքները:

Աշխատանքը վերամբարձ ու քարշի մեխանիզմներով ու հարմարանքներով, հսկողությունը, դննումն ու նրանց ինամբը պետք է տարվեն համաձայն հատուկ կանոնների:

Մեկ աշխատողի համար թույլատրվող ծանրությունների քարձրացման ու փոխադրման սահմանային բեռլ չպիտի գերազանցի 60 կգ:

68. Վերամբարձ և քարշի մեխանիզմներով աշխատանքներ ոկտելուց առաջ աշխատանքներ կատարողը պետք է ստուգի կարառիկների ու այլ հարմարանքների խարիսխները գետնի մեջ ամբացնելու վստահելիությունը, նույնպես և գետնի մեջ խրված ցցերի կամ ձգման համար թաղված ուղղելների վստահելիությունը, պետք է ստուգի կարապիկի հաստումը նրա անշարժության տեսակետից:

Հետագայում, բուն աշխատանքների ժամանակ, նա պետք է շարունակ հսկի նեցուկի ու ամրացումների անշարժությանն ու կայունությանը:

69. Բեռների բարձրացման ու ամեն տեսակ քաշումների ժամանակ աշխատանքներ կապարողը պետք է մարդկանց դասավորի այնպես, վոր բեռը ընկնելու, լարը կարգելու կամ քարշի հարմարանքների ամբողջությունը խախտվելու դեպքում աշխատողները վնասավածքներ հստանան:

Մասնավորապես, նա պետք է հսկի, վոր վոչ վոք չանցնի կամ շկանգնի բարձրացվող կամ փայլ դժվող հենարանի տակ, ձգվող լարի տակ, քարշի արոսների ու ցցապարանների տակ, նույնպես և նեցուկների ու ամրագումների մոտ ձոման, իւրմիւ-

70. Աշխատանքների հետ անմիջական առնչություն չունեցող մարդկանց գտնվելը բեռների բարձրացման (որ, հենարանների բարձրացումն ու վայր գցելը) կամ քաշումների կատարման հետ կազմած աշխատանքների տեղում չի թույլատրվում:

իսատանքը կարգավորող ազդանշաններն ու հետո պետք ե սոլու-
զի բրիգադի ազդանշանների իմանալը:

72. Վորեւ բեռ հենարանի վրա բարձրացնելուց առաջ աշ-
խատանքներ կատարողը նախապես պետք ե պարզի, թե կարող
է արդյօք տվյալ հենարանն ու տրավերսը դիմանալ անվտանգ
բարձրացվող բեռին:

Իեռները հենարաններին բարձրացնելիս աշխատանքներ
կատարողը պետք ե ճախարակները այնպես գասավորի, վոր-
ովեսղի չառաջնան այնպիսի ճիգեր, վորոնք կարող են հենարա-
նը կոտրել կամ գցել:

73. Յեթե լարերի ու տրոսների միակողմանի ձգման հա-
մար չհաշված հենարանը ժամանակավորապես պետք ե յենթարկ-
վի միակողմանի ձգման, որինակ յեղած լարերի միակողմանի-
խզման կամ նոր ձգվող լարերը նրան ամրացնելու ընթացքում,
նա պետք ե ամրացվի հակառակ կողմից ժամանակավոր հետա-
ձբումով, ընդունում աշխատանքներ կատարողը պետք ե հա-
տուկ զիտովության յենթարկի այն խարիսխների կայունու-
թյունը, վորոնց ամրացվում ե հետաձգումը:

74. Յեթե յերկաթուղիները, խճուղիները, կողմնուղիները
նավագնաց գետերն ու ջրանցքները հատող կամ անմիջականու-
րեն նրանց մոտ գտնվող գծերում պետք ե աշխատանքներ կա-
տարվեն, փառնց ընթացքում նշված ուղիներով կատարվող յեր-
թեվեկության կապակցությամբ կարող ե վորոն վտանգ առա-
ջանալ աշխատող գծային անձնակազմի կամ թե բուն յերթեվե-
կության համար (որ, ուղիները հատող լարերի կախելու կամ
համելու աշխատանքները, ուղիների մոտ հենարանները դնելու
կամ վայր գցելու աշխատանքը և այլն), աշխատանքներ կատա-
րողը պարտավոր ե հետեւյալ միջոցառումները ձեռնարկել՝

ա) Յերկաթուղիների և նավագնաց գետերի ու ջրանցք-
ների մոտ կատարվող աշխատանքների ընթացքում նա (աշխա-
տանք կատարողը) պետք ե նախորոք նախազգուշացնի յերկա-
թեվային աղմինխարացիային կամ ջրային տրանսպորտի աղ-
մինխարացիային և նրանից պահանջի աշխատանքների տեղը
ուղարկել հատուկ ագենտներ, վորոնք նախազգուշացնող ազդա-
նշաններ զնելով ու այլ միջոցառումներով կկարողանան աշխա-
տանքի ընթացքում գնացքների կամ նավերի յերթեկությունը
կանգնեցնել, և կամ զծացին անձնակազմին ժամանակին կկարո-
ղանան նախազգուշացնել նավերի կամ գնացքների մոտենալու

մասին աշխատանքները ժամանակավորապես դադարեցնելու
համար:

Դնացքի կամ նավի անցնելու ժամանակ աշխատանքները
դադարեցնելիս բանվորները չպետք ե գտնվեն հենարանների
վրա, այլ պետք ե լինեն գետնին:

բ) Խճուղիների և կողմնուղիների մոտ աշխատելիս աշխա-
տանքի վայրից 100 մ. այս ու այն կողմ պետք ե կանգնեցվեն
հանապարհին բանվորներ ցերեկը ազդանշման կարմիր զրոշակ-
ներով կամ գիշերը լապտերներով ավտոմոբիլային, հեծյալ կամ
այլ յերթեկությունը հանապարհի տվյալ ուղեմասում կանգ-
նեցնելու համար

75. Աշխատանքների տեղին ամպրոպի մոտենալու գեպքում
(թեկուղ հեռավոր շանթի ու վորոտի առկայությունը) աշխա-
տանքներ կատարողը պարտավոր ե ամբողջ ըրիդագը աշխա-
տանքից հանել ու մարգկանց հեռացնել տրասայի յեղից: Ամպ-
րոպի ժամանակ ինչպես աշխատանքներ կատարելը, նույնպես և
հենարանների մոտ գտնվեն արգելվում ե:

76. Աշխատանքի համար գիծը ուղերդվող բոլոր բըիգադնե-
րը պետք ե ունենան հատկապես հարմարեցրած առանձին ան-
ջրանցիկ արկղում կամ պայուսակում 5-րդ հավելվածի համա-
ձայն տեղում առաջին ոգնություն հասցնելու համար անհրաժեշ-
տագույն բուժամիջոցների հավաքում:

Աշխատանիք հենարանների վրա

77. Հենարանի վրա բարձրանալուց առաջ, նախազե-
ղետք ե համոզվել, վոր հենարանի հիմքը ամուր ե: Յեթե միայ-
նակ հենարանի հիմքը փակ ե ավելի, քան ըստ շառավիղի 2,0
սմ. հիմքի տրամագծի 20—25 սմ. գեղեցիկում, 3 սմ. տրամագծի
25—30 սմ. գեղեցիկում և 4 սմ. տրամագծի 30 սմ. ավելի, աշխա-
տանքներ կատարողը պարտավոր ե նախ քան մարգկանց հենա-
րանի վրա ուղարկելը, ամրացնել նրան մի քանի բանիչքով:
վորպեսզի ապահովի անկումից:

Դրանից հետո անկայուն հիմքով հենարանի վերին մասին
պետք ե ամրացնել ձգման ծայրերը և վստահելիորեն ցցվապա-
րանել նրան այդ ձգումներով: Բարձր հենարանների ամրացման
անհրաժեշտությունը և յաղանակները վորոշում ե աշխատանքներ
կատարողը գրոցների քանակի և նրանց փտման ստիճանի կա-
պակցությամբ:

Արգելվում ե բարձրանալ նոր զրված հենարանին սինչև
որի լրիկ ամրացնելը:

78. Առանց ճանկերի փայտյա հենարանի վրա բարձրանալն
ու իջնելը չի թույլատրվում: Փայտյա հենարանի վրա պետք է
աշխատել պարտադրուեն յերկու ճանկերի վրա կանգնած:

79. Յենթակայանի հենարանների կոմ հենարանային կոն-
սուստկցիանների վրա աշխատելիս՝ աշխատողը նրանց ամրացված
լինի ապահովիչ գոտիյով:

80. Չի թույլատրվում բարձրանալ ու աշխատել անկյունի
հենարանների վրա գծի ներքին անկյան կողմից այն ֆաղի, վո-
րի վրա աշխատանքներ են կատարում, այսինքն այն կողմից,
վերտեղ ձգված են հազարդալարերը. չի թույլատրվում նույնպես
բարձրանալ ու աշխատել այն կողմից, վորաշելից հազորդալարը
ձգվում է:

81. Հազորդալարերի վերաձգումները և մեկուիչները փո-
խելու ժամանակ՝ այն դեպքերում, յերբ մարդկոնց բարձրանա-
լու համար պետք է լինում ոգուվել կախվթոցներով, վերջինների
կառուցվածքը այսպես պիտի լինի, վորաշելի մարդկանց, նյու-
թերի ու գործիքների նրանց միջից ընկնելու հնարավորությու-
նը բացառվի:

Մոնտաժի ընթացքում կայմերի վրա աշխատելու համար
գործադրվող հարթակներն ու սանդուխքները պետք է լինեն հա-
մապատասխան ամրության, ունենան հարսար տեղեր գոտին
նրանց մեր գցելու համար ու շրջումը, տեղաշարժը և այլն խան-
շարող հարմարանքներ:

82. Յեթե կախվթոցները, հարթակներն ու սանդուխքները
կախվում են կեռերից, վերջինները պետք է ոժտված լինեն պա-
րանը նրանցից սահելու գեմ հարմարանքներով: Պարանների
բաշելն ու իջեցնելը պետք է կատարվեն կարապիկների ոգուու-
թյամբ կամ ցածրում գտնվող հատկապես նշանակված բանվոր-
ների կողմից, բայց վոչ մի դեպքում կախվթոցում դանվող բան-
վորներով: պարանի աղատ ծայրերը պետք է պինդ ամրացվեն:

83. Փայտյա արավերանների վրա աշխատելուց առաջ ան-
հրաժեշտ և նախապես հենարանը ուշադիր գննելու միջոցով հա-
մոզվել, վոր արավերաը ամուր է և բոլորովին փթած չե:

Անկախ զննման արդյունքների արավերա վրա բարձրա-
նալուց առաջ մոնտայորը պետք է իր ապահովիչ գոտին կապի

հենարանի վոափ գաղաթին, վորպեսպի արավերա հնարավոր-
ջարդման դեպքում նրա գետին ընկնելը բացառվի:

Փատած արավերանների վրա աշխատանքներ կատարելն ար-
գելում է:

84. Տվյալ հենարանի վրա ծանր բեռների բարձրացումներ-
կամ իջեցումներ կատարելու ժամանակ, նույնպես և գետնից-
տվյալ հենարանի հետ կապված ձգումներ կատարելու ընթաց-
քում (այսպիս, որինակի, Ո ձեփ հենարանի վրայից տրավերսը հա-
զորդալարերի հետ միասին իջեցնելու կամ բարձրացնելու աշ-
խատանքները, հենարանի գոխվող վոափ վայր գցելը կամ նրա
նոր վոափ զնելը և այլն) արգելվում ե հենարանի վրա գտնվելը:

85. Հենարանի վրայից վորեւ առարկա ընկնելու դեպքում՝
գերախա գեպքից խուսափելու համար այն հենարանների հիմքի
մոտ, վորոնց վրա աշխատանք ե կատարվում, վոչ վոք չպիտի
դառնվի:

86. Դիշեր ժամանակ թույլատրվում ե աշխատանք միայն
այն դեպքում, յերբ ցերեկը նրա կատարելն անհնարին ե: Ար-
գելվում են աշխատանքները հենարանների վրա ծորակներով,
գետերով և այլ հատված լեռնոտ տեղերում, բացառությամբ
ավարիայի գեպքերի, յերբ գիշերային աշխատանքները անհրա-
մեշտ են վնասվածքի շուտափույտ լուծարքի համար:

Ընդմիջումներ աւխատանքների ընթացքում

87. Յեթե աշխատանքների դեկավարը նկատում ե ամպրո-
պի մոտեցումը կամ թե անձնակազմի անվտանգությանը սպառ-
նացող վորեւ բան, պարտավոր և աշխատանքից հանել բրիգադը:

Այդ գեպքերում նա պիտի աշխատի կատարված ընդմիջ-
ման մասին տեղեկացնել ուղերատիվ հերթականին և նրանից
ստանալ ցուցումներ աշխատանքները լրիվ կծկելու կամ ամպրո-
պը անցնելուց հետո նրանց վերականելու մասին:

Յեթե ուղերատիվ հերթականին շտագ տեղեկացնելն ան-
հնար ե, աշխատանքներ կատարողը, յելներով տեղական պայման-
ներից ու աշխատանքները վարելու համար իրեն թույլատրված
ժամանակի տելուղությանից, պետք է վճռի, կարող և արզյոք նա-
շուտով աշխատանքները գծում վերսկսել թե պետք և նրանք
դադարեցնի:

88. Աշխատանքները ժամանակավորապես դադարեցնելիս
լույր հողակցումները մնում են տեղերում: Այս գեպքերում յեթե

Արիգաղը աշխատանքի տեղից հեռանում և վորոշ ժամանակով, աշխատանքների տեղում պետք է պահակայիններ թողնվեն, վորանց պարտականությունների մեջ և մտնում չթույլատրել հողակցումների հանումը, չթույլատրել փորված փոսորաններին մարդկանց ու կենդանիների մոտենալը, վերջնականապես չդըրված հենարաններին, բեռնվածքի տակ գտնվող վերամբարձ ու քարշի մեխանիզմներին և հարմարանքներին մոտենալը:

89. Ընդմիջումից հետո աշխատանքները վերսկսելիս, աշխատանք կատարազը, նախ քան մարդկանց թողնելը, ինքը անձամբ պետք է համոզվի գծում թողած պահպանիչ հողակցումների ամբողջության ու վստահելիության մեջ:

Աշխատանիներ վերջացնելը

90. Աշխատանքները վերջացնելուց հետո աշխատանքներ կատարողը, անձամբ ստուգելով նորոգվող գծամասի դրությունը (հենարանների, լարերի և ծաղկացթաների վրա գործիքի, նյութի և այլ. բացակայությունը), և հանելով գծից ամբողջ բրիգադը, կարգադրություն և տալիս հանել հողակցումները, սկզբում գծից անջատելով ու ապա հռողից։ հողակցումը հանելու ժամանակ այս ուղերացիայով չզբաղված լույսը սարդիկ պետք և գտնվեն գծի արասայից դուրս։

91. Հանելով հողակցումը, աշխատանքներ կատարողը տեղեկացնում է ոպերատիվ հերթապահին կամ աշխատանք կատարելու թույլատվություն տվող աշխատանքների զեկավարին աշխատանքը վերջացնելու և հողակցման հանելու մասին։ Այս հայտարարությունից հետո աշխատանքներ կատարողը գիծը պետք է համարի լարման տակ գտնվող և վոչ մի աշխատանք նրա վրա չթույլատրի։

Տեղեկացում աշխատանինը վերջացնելու մասին

92. Տեղեկացումը աշխատանքները վերջացնելու մասին աշխատանք կատարողի կողմից կարող և հանձնվել ոպերատիվ հերթապահին կամ աշխատանքների զեկավարին, վորից նաև աշխատանքի թույլատվություն և ստացել, միայն հետեւյալ յեղանակներով։

ա) Աշխատանքներ կատարողի անձնական տեղեկացումով աշխատանքներից վերադառնալուց հետո,

բ) Հեռախոսային տեղեկությունով հակադարձ ստուգումով։ Հեռախոսային տեղեկությունը արվում է կամ անմիջականորեն և կամ թե միջակա յենթակայանի հերթապահի միջոցով, պահպանով նույն կանոնները, վորոնք նշանակված են աշխատանքներ կատարելու թույլատվության հանձնման 53 կ.։

գ. Սուրհանդակակի ձեռքով գրություն ուղարկելով.

